

Դրամական միջոցների փոխանցման նպատակի կոդեր

Խմբի կոդ	Կոդ	Կատեգորիաներ	Բացատրություն
1000	Ապրանքներ		
	1001	Ապրանքների արտահանում կամ ներմուծում	Փոխանցում կամ ստացում, որի հիմքում ընկած է ապրանքների արտահանումը կամ ներմուծումը՝ սեփականության իրավունքի փոփոխությամբ:
2000	Ծառայություններ		
	2010	Ապրանքների վերամշակման դիմաց վճարներ	Վերամշակման նպատակով ներմուծված կամ արտահանված ապրանքների վերամշակման դիմաց վճարումներ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև
	2020	Տեխնիկական սպասարկման և վերանորոգման դիմաց գումարներ	Ներառում է վերանորոգման նպատակով շարժական միջոցների (օրինակ՝ նավեր, ինքնաթիռներ և այլ տրանսպորտային միջոցներ) վերանորոգման համար ստացված կամ վճարված միջոցները:
2010	Տրանսպորտ		
	2031	Բեռնատար ծովային տրանսպորտ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է բեռնատար ծովային տրանսպորտային ծառայությունների դիմաց վճարմանը:
	2032	Մարդատար օդային տրանսպորտ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է մարդատար օդային տրանսպորտային ծառայությունների դիմաց վճարմանը:
	2033	Բեռնատար օդային տրանսպորտ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է բեռնատար օդային տրանսպորտային ծառայությունների դիմաց վճարմանը:

	2034	Մարդատար երկաթուղային տրանսպորտ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է մարդատար երկաթուղային տրանսպորտային ծառայությունների դիմաց վճարմանը:
	2035	Բեռնատար երկաթուղային տրանսպորտ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է բեռնատար երկաթուղային տրանսպորտային ծառայությունների դիմաց վճարմանը:
	2036	Մարդատար ցամաքային տրանսպորտ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է մարդատար կամ ցամաքային կամ ավտոտրանսպորտային կամ ծառայությունների դիմաց վճարմանը:
	2037	Բեռնատար ցամաքային տրանսպորտ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է բեռնատար կամ ցամաքային կամ ավտոտրանսպորտային ծառայությունների դիմաց վճարմանը:
	2038	Հարակից, օժանդակ և այլ ծառայություններ	Հարակից, օժանդակ և այլ ծառայությունների դիմաց վճարներին են վերաբերում օդանավակայաններում, նավահանգիստներում և այլ կայաններում մատուցվող ծառայությունները, հատկապես բեռնման-բեռնաթափման աշխատանքները, պահպանումն ու պահեստավորումը, փաթեթավորումը, նավերի, ինքնաթիռների ուղեկցումը, տրանսպորտային միջոցների շահագործումն ու մաքրումը, փրկարարական աշխատանքները:
2040	Ճանապարհորդություն		
	2041	Հյուրանոցի ամրագրման վճարներ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է հյուրանոցում, հյուրատանը, բնակարաններում գիշերելու ծառայությունների դիմաց վճարներին:
	2042	Առողջության հետ կապված վճարներ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է դեղորայքի ձեռքբերմանը և բժշկական ծառայությունների դիմաց վճարներին:
	2043	Կրթության հետ կապված վճարներ	Փոխանցում կամ ստացում, որը վերաբերում է կրթության դիմաց ծառայությունների

		վճարներին՝ հանրակացարանի, ուսուցման և այլ ուսումնական ծառայությունների դիմաց:
2044	Ճանապարհորդության այլ ծախսեր	Փոխանցում կամ ստացում, որը ներառում է տուրիստական փաթեթների ձեռք բերումը և տուրիզմի նպատակով իրականացված այլ վճարներ (էքսկուրսիաներ, թանգարանների մուտքավճարներ և այլն):
2050	Շինարարություն	
2051	Շինարարություն արտասահմանում	Ստացում, որը վերաբերում է հիմնական միջոցների, ինժեներական կառույցների՝ ճանապարհ, կամուրջ, կառուցման, վերազինման կամ վերանորոգման դիմաց իրականացված վճարներին: Այստեղ լրացվում են մինչև 1 տարի տևողությամբ նախագծերի մասով ՀՀ ռեզիդենտների կողմից արտերկրում իրականացված աշխատանքների դիմաց վճարները:
2052	Շինարարություն հաշվետու երկրում	Փոխանցում, որը վերաբերում է հիմնական միջոցների, ինժեներական կառույցների՝ ճանապարհ, կամուրջ, կառուցման, վերազինման կամ վերանորոգման դիմաց իրականացված վճարներին: Այստեղ լրացվում են մինչև 1 տարի տևողությամբ նախագծերի մասով ոչ ռեզիդենտների կողմից ՀՀ-ում իրականացված աշխատանքների դիմաց վճարները:
2060	Ապահովագրական և կենսաթոշակային ծառայություններ	
2061	Ապահովագրական վճարներ	Ապահովագրական վճարները ներառում են կյանքի ապահովագրության, ոչ կյանքային ապահովագրության, վերապահովագրության, բեռների ապահովագրության և այլ տեսակի ապահովագրական ծառայությունների դիմաց վճարները:
2062	Ապահովագրական հատուցում	Ապահովագրական հատուցումները ներառում են ապահովագրական ծառայությունների

		շրջանակներում ստացված կամ փոխանցված հատուցումները:
	2063	Վճարված կամ Ստացված թոշակներ Ներառում են ոչ ռեզիդենտներին վճարված և ռեզիդենտների ստացած թոշակները և նպաստները
2070	Հեռահաղորդակցության, տեղեկատվական, համակարգչային ծառայություններ, փոստային ծառայություններ	
	2071	Փոստային և սուբհանդակային ծառայություններ Փոստային ծառայությունները ներառում են փոստային գրասենյակի ծառայությունները, ինչպիսիք են նամականիշերի և դրամական պատվերների վաճառքը, մատուցված փոստային, հեռագրային ծառայության դիմաց վճարները և այլն: Բացառություն են կազմում փոստային գրասենյակների կողմից մատուցվող ֆինանսական ծառայությունները, ինչպիսիք են՝ բանկային և խնայողական հաշիվների հետ կապված ծառայությունները (որոնք հաշվառվում են ֆինանսական ծառայությունների ներքո), փոստի պատրաստման ծառայությունները (գրանցվում են այլ բիզնես ծառայությունների ներքո) և փոստային կապի համակարգերի հետ կապված կառավարման ծառայությունները (ներառվում են հեռահաղորդակցության ծառայությունների մեջ):
	2072	Հեռահաղորդակ-ցության ծառայություններ Հեռահաղորդակցության ծառայությունները ներառում են այն փոխանցումները կամ ստացումները, որոնք իրականացվել են ձայնի, պատկերի, տվյալների կամ այլ տեղեկատվության՝ հեռախոսի, հեռագրի, ռադիոյի կամ հեռուստատեսային ալիքների միջոցով հեռարձակման դիմաց: Ներառում է նաև հեռահաղորդակցության ցանցի սպասարկման դիմաց վճարները:
	2073	Համակարգչային ծառայություններ Համակարգչային ծառայությունները ներառում են համակարգչային սարքավորումների սպասարկման, վերանորոգման, պատվերով համակարգչային ծրագրերի մշակման,

			համակարգչային ոլորտում տրամադրված խորհրդատվության դիմաց վճարները, ինչպես նաև ոչ անհատական պատվերով մշակված ծրագրային փաթեթներից օգտվելու համար լիցենզիոն վճարները և այլ նմանատիպ ծառայությունների դիմաց վճարները:
2074		Տեղեկատվական ծառայություններ	Տեղեկատվական ծառայությունները ներառում են տեղեկատվական գործակալությունների ծառայությունների, ինչպես ՁԼՄ-ի նորությունների, նկարների ու հոդվածների տրամադրման, այնպես էլ տվյալների բազաների ստեղծման, տարածման ու պահպանման ծառայությունների դիմաց վճարները: Այստեղ ներառվում են նաև թերթերի և ամսագրերի ուղիղ անհատական բաժանորդագրությունը փոստային կամ այլ եղանակով առաքման միջոցով:
2080	2080	Ֆինանսական ծառայություններ	Ֆինանսական ծառայությունները ներառում են ֆինանսական միջնորդությանը և այլ ֆինանսական ծառայությունների դիմաց վճարները, մասնավորապես այն վճարները, որոնք կապված են արժեթղթերի, ակտիվների կառավարման, ֆինանսական շուկայի կարգավորման և այլ գործառնությունների հետ (բացառությամբ ապահովագրական ընկերությունների և կենսաթոշակային հիմնադրամների ծառայությունների դիմաց վճարներից):
2090	2090	Մտավոր սեփականության օգտագործման դիմաց վճարներ	Մտավոր սեփականության օգտագործման դիմաց վճարները ներառում են մտավոր սեփականության օգտագործման դիմաց վճարները, որոնց թվում են՝ արտոնագրերը, ապրանքանիշերը, հեղինակային իրավունքը, առևտրային գաղտնիքները և այլ նմանատիպ վճարները:
2100	Պրոֆեսիոնալ և կառավարման խորհրդատվական ծառայություններ		
	2101	Իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական, հաշվետարական և	Ներառում է իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական,

		հարկային խորհրդատվական ծառայություններ	հաշվետարական և հարկային խորհրդատվական ծառայությունների դիմաց վճարներ
	2102	Բիզնեսի և կառավարման ոլորտում խորհրդատվական ծառայություններ, հասարակության հետ կապեր	Ներառում է կառավարչի, կառավարման ոլորտում խորհրդատվական, հասարակայնության հետ կապերի դիմաց մատուցած ծառայությունների դիմաց վճարները:
	2103	Գովազդային, շուկայի ուսումնասիրման և հասարակական կարծիքների հետազոտման ծառայություններ	Ներառում է գովազդային, շուկայի ուսումնասիրման և հասարակական կարծիքների հետազոտման ծառայությունների դիմաց վճարները:
2110	Տեխնիկական, առևտրի հետ կապված և այլ գործնական ծառայություններ		
	2111	Ճարտարապետական, ինժեներական և այլ տեխնիկական, գյուղատնտեսական, հանքագործության և տեղում արտադրանքի վերամշակման ծառայություններ, առևտրի հետ կապված ծառայություններ, այլ բիզնես ծառայություններ	Ներառում է ճարտարապետական, ինժեներական և այլ տեխնիկական, գյուղատնտեսական, հանքագործության և տեղում արտադրանքի վերամշակման ծառայությունների, առևտրի հետ կապված ծառայությունների (առևտրի հետ կապված ծառայություններն ընդգրկում են ապրանքների և ծառայությունների գործարքների միջնորդավճարները, որոնք վճարվում են առևտրականներին, ապրանքային բրոքերներին, դիլերներին, աճուրդավարներին և կոմիսիոն գործակալներին) և այլ բիզնես ծառայությունների դիմաց վճարները (անվտանգության ապահովման և հետաքննության, թարգմանչական, լուսանկարչական, շենքերի մաքրում և այլն):
	2112	Գործառնական վարձակալության ծառայություններ	Ներառում է առանց անձնակազմ նավերի, օդանավերի և տրանսպորտային սարքավորումների, երկաթուղային վագոնների, բեռնարկղերի վարձակալության վճարները:
2120	2120	Անձնական, մշակութային և զվարճանքի ծառայություններ	Ներառում է տեսալսողական ու հարակից ծառայությունների դիմաց վճարները, որոնց թվում են աուդիովիզուալ և հարակից

			ծառայությունները, շարժապատկերների (ֆիլմերի, տեսաերիզների, սկավառակի վրա կամ էլեկտրոնային եղանակով փոխանցվող և այլն), ռադիո և հեռուստատեսային հաղորդումների (ուղիղ կամ ուղիղ եթերում) արտադրության վճարները, կաբելային և արբանյակային ծառայությունների մուտքի համար վճարները, թատերական և երաժշտական բեմադրությունների, սպորտային միջոցառումների, կրկեսների և նմանատիպ այլ միջոցառումների հետ կապված դերասանների, ռեժիսորների և պրոդյուսերների վճարները: Այստեղ են ներառվում նաև թանգարանների հետ կապված, այլ մշակութային, սպորտային, մոլախաղային և հանգստի գործունեության վճարները, բացառությամբ ճանապարհորդության մեջ ներառվածների: Ինչպես նաև մարզիկների մրցանակները:
2230	2230	Պետական ապրանքներ և ծառայություններ	Ներառում է դեսպանատների, ռազմական բազաների, միջազգային կազմակերպությունների հետ կապված առաքված կամ ստացված ապրանքների ու ծառայությունների դիմաց վճարները: Ինչպես նաև արտերկրում գտնվող դիվանագետների, հյուպատոսական անձնակազմի, զինվորական անձնակազմի և նրանց ընտանիքների կողմից ձեռք բերված ապրանքների կամ ծառայությունների վճարները, ինչպես նաև այն ծառայությունների դիմաց վճարները, որոնք տրամադրվում են կառավարությունների կողմից կամ այլ կառավարություններին, բայց ներառված չեն այլ կատեգորիաներում:
2900	2900	Ծառայությունների համար վճարներ, որոնք չեն ներառվել նախորդ թվարկածներում	Ծառայությունների համար վճարներ, որոնք չեն ներառվել նախորդ թվարկածներում:
3000	Եկամուտ		

			Ստացված կամ փոխանցված աշխատավարձ, որը ներառում է սահմանային, սեզոնային և այլ կարճաժամկետ աշխատողների վարձատրությունը, որոնք հանդիսանում են ոչ ռեզիդենտ հաշվետու երկրում, ինչպես նաև այն ռեզիդենտ աշխատողների վարձատրությունը, որոնց գործատուն հանդիսանում է ոչ ռեզիդենտ:
3020	Ներդրումային եկամուտներ		
	3021	Եկամուտ շահաբաժիններից	Կապիտալում մասնակցության դիմաց ստացված կամ վճարված շահաբաժիններ:
	3022	Պարտքային արժեթղթերի տոկոսավճարների (կուպոնների) ստացում կամ վճարում	Պարտքային արժեթղթերի դիմաց տոկոսավճարների կամ կուպոնների ստացում կամ փոխանցում:
	3023	Վարկերի կամ փոխառությունների դիմաց ստացվող կամ վճարվող տոկոսավճարներ	Տրամադրված կամ ստացված վարկի կամ փոխառության դիմաց տոկոսավճարների ստացում կամ փոխանցում:
	3024	Ավանդների դիմաց ստացվող կամ վճարվող տոկոսավճարներ	Ներդրված ավանդի դիմաց տոկոսագումարների ստացում կամ վճարում:
3030	3030	Այլ եկամուտներ (արտադրության և ներմուծման հարկեր	Ներառում է արտադրության և ներմուծման հարկերի վճարները, ստացված կամ վճարված սուբսիդիաները և հողի կամ այլ բնական ռեսուրսների վարձակալության վճարները)
4000	Ընթացիկ տրասֆերտներ կամ դրամական օգնություն		
4010	4010	Պետական ընթացիկ տրանսֆերտներ	Պետական կառավարման համակարգին ուղղված հարկեր եկամուտից, հարստությունից և այլ հարկեր՝ ներառյալ տուգանքներ, տույժեր, անդամակցության վճարներ և այլ տարատեսակ ընթացիկ տրանսֆերտներ
4020	4020	Ֆինանսական կազմակերպություններ, ոչ ֆինանսական կազմակերպություններ, տնային տնտեսություններ և տնային տնտեսությունները սպասարկող	Նվիրատվություն, ժառանգություն, հումանիտար օգնություն, որոնք ստացել են ֆիզիկական անձինք և տնային տնտեսություն սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունները (SSUNUԿ-ներ) Հայաստանում կամ տրամադրվել են

		շահույթ չհետապնդող կազմակերպություններ (SSUՈԱԿ)	ֆիզիկական անձանց և SSUՈԱԿ-ներին արտերկրում, ալիմենտներ և այլ վճարումներ՝ երեխաների խնամքի համար, թոշակներ, կրթաթոշակներ և սոցիալական ապահովության շրջանակներում տրամադրվող այլ վճարումներ՝ պետական մարմինների և SSUՈԱԿ-ների կողմից: Պարբերական փոխանցումներ (ներառյալ անդամավճարները) բարեգործական, կրոնական, գիտական և մշակութային կազմակերպություններին: Մաքսային վճարներ և տուգանքներ, որոնք վճարվում են Հայաստանի SSUՈԱԿ-ների կողմից ոչ ռեզիդենտներին կամ ոչ ռեզիդենտների կողմից՝ Հայաստանի SSUՈԱԿ-ներին:
5000	Կապիտալ տրանսֆերտներ		
	5010	Պետական կապիտալ տրանսֆերտներ	Հիմնական միջոցների ձեռքբերման կամ շինարարական աշխատանքներ իրականացնելու նպատակով պետական հատվածի ստացված (տրամադրած) անհատույց միջոցները, նվիրատվությունները, դրամաշնորհները
	5020	Ֆինանսական կազմակերպություններ, ոչ ֆինանսական կազմակերպություններ, տնային տնտեսություններ և SSUՈԱԿ	Հիմնական միջոցների ձեռքբերման կամ շինարարական աշխատանքներ իրականացնելու նպատակով տնային տնտեսությունների կամ SSUՈԱԿ-ների կողմից ստացված (տրամադրած) անհատույց միջոցները:
	5030	Ոչ արտադրական, ոչ ֆինանսական ակտիվների դիմաց վճարներ	Այն ներառում է բնական պաշարների (բնական պաշարներից օգտվելու իրավունքի թույլատվություն), լիցենզիայի, վարձակալական համաձայնագրերի, առևտրային (մարքեթինգային) ակտիվների և գուդվիլի (բրենդային անվանումներ, առևտրային նշաններ, լոգոտիպեր և այլն) դիմաց վճարներ:

	5040	Կրիպտոարժույթների դիմաց վճարներ	Կրիպտոարժույթների ձեռքբերման կամ վաճառքի դիմաց վճարներ:
6000	Ներդրումներ		
	6010	Կանոնադրական կապիտալում ավելի քան 10 % փայամասնակ-ցության ձեռքբերում կամ ձեռնարկության հիմնադրում՝ կանոնադրական կապիտալում ավելի քան 10 % փայամասնակ-ցությամբ	Ձեռնարկության կանոնադրական կապիտալում 10% և ավել փայամասնակցության ձեռքբերման կամ նոր ձեռնարկության հիմնադրման նպատակով գումարի ստացում կամ փոխանցում:
	6020	Կանոնադրական կապիտալում մինչև 10 % փայամասնակցության ձեռքբերում կամ ձեռնարկության հիմնադրում՝ կանոնադրական կապիտալում մինչև 10 % փայամասնակ-ցությամբ	Ձեռնարկության կանոնադրական կապիտալում մինչև 10% փայամասնակցության ձեռքբերման կամ նոր ձեռնարկության հիմնադրման նպատակով գումարի ստացում կամ փոխանցում:
	6030	Պարտքային արժեթղթերի (պարտատոմսեր, մուրհակներ և այլն) վաճառք կամ առք	Պարտքային արժեթղթերի առքի, վաճառքի կամ մարման հետ կապված ստացված կամ փոխանցված միջոցներ:
	6040	Այլ արժեթղթերի հետ գործարքներ (օր. ածանցյալ գործիքներ)	Գործարքներ արժեթղթերի գծով (ածանցյալ գործիքներ, չեկեր և այլն), բացի պարտքային արժեթղթերից:
6100	Այլ ներդրումներ		
	6110	Վարկերի կամ փոխառություն-ների տրամադրում	Վարկի կամ փոխառության տրամադրման նպատակով գումարի փոխանցում կամ ստացում:
	6120	Վարկերի կամ փոխառություն-ների մարում	Տրամադրված կամ ստացված վարկի կամ փոխառության մարման նպատակով գումարի ստացում կամ փոխանցում:
	6130	Ավանդների մարում	Առևտրային բանկում ներդրված ավանդի մարում ռեզիդենտի կամ ոչ ռեզիդենտի կողմից:
6200	Անշարժ գույքի առք կամ վաճառք		
	6210	Ստացողի համար անշարժ գույքի ձեռքբերման նպատակով գումարների ստացում կամ փոխանցում	Գումարների ստացում կամ փոխանցում, որոնց նպատակն է միջոցները ստացողի համար անշարժ գույքի ձեռքբերումը:

	6220	Փոխանցողի համար անշարժ գույքի ձեռքբերման նպատակով գումարների ստացում կամ փոխանցում	Գումարների ստացում կամ փոխանցում, որոնց նպատակն է միջոցները փոխանցողի համար անշարժ գույքի ձեռքբերումը (անմիջապես գույքը վաճառողից կամ միջնորդավորված):
	6230	Անշարժ գույքի վաճառքից գումարների ստացում կամ փոխանցում	Սեփական անշարժ գույքի վաճառքից գոյացած գումարների փոխանցում կամ ստացում:
6300	Հատուկ կոդեր		
	6310	Գումարի վերադարձ	Երբ իրականացված գործարքի գումարի փոխանցումից հետո ինչ-ինչ պատճառներով տեղի է ունեցել գումարի հետվերադարձ գործարքի մյուս կողմի բանկի կողմից:
6400	Այլ կոդեր		
	6410	Փոխանցում սեփական հաշիվների միջև	Ներառվում են հաճախորդի սեփական մի հաշվից մեկ այլ սեփական արտասահմանյան հաշիվ միջոցների փոխանցումը:

ԲԱՆԿԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՌԵԶԻԴԵՆՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1.	Հայաստանի Հանրապետությունում ունի մշտական բնակություն կամ Հայաստանի Հանրապետությունում բնակվում է 1 տարուց ավելի
2.	Հայաստանի Հանրապետությունում բնակվում է 1 տարուց պակաս
3.	Ունի սեզոնային աշխատանք Հայաստանի Հանրապետությունից դուրս, սակայն ծախսերի հիմնական մասը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում
4.	Ունի սեզոնային աշխատանք Հայաստանի Հանրապետությունում, սակայն ծախսերի հիմնական մասն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունից դուրս
5.	Ուսանում է կամ բուժման նպատակով գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, սակայն հանդիսանում է այլ երկրի քաղաքացի
6.	Ուսանում է կամ բուժման նպատակով գտնվում է այլ երկրում, սակայն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

1. Գործընկերը ՀՀ **ռեզիդենտ է** համարվում, եթե համապատասխանում է սույն հավելվածի աղյուսակում սահմանված 1-ին, 3-րդ կամ 6-րդ չափանիշին, ընդ որում, այն դեպքերում, երբ 6-րդ չափանիշին համապատասխանող անձը համապատասխանում է նաև 2-րդ կամ 4-րդ չափանիշներին, ապա անձի ռեզիդենտությունը որոշվում է 6-րդ չափանիշի հիման վրա:

2. Գործընկերը **ոչ** ՀՀ **ռեզիդենտ է** համարվում, եթե համապատասխանում է սույն հավելվածի աղյուսակում սահմանված 2-րդ, 4-րդ կամ 5-րդ չափանիշին, ընդ որում, այն դեպքերում, երբ 5-րդ չափանիշին համապատասխանող անձը համապատասխանում է նաև 1-ին կամ 3-րդ չափանիշներին, ապա անձի ռեզիդենտությունը որոշվում է 5-րդ չափանիշի հիման վրա:

3. Սույն հավելվածի աղյուսակում սահմանված չափանիշների հիման վրա որոշվում է միայն ֆիզիկական անձ հանդիսացող գործընկերոջ ռեզիդենտությունը: Ընդ որում, աղյուսակում սահմանված չափանիշները կիրառվում են նաև այլ երկրների ռեզիդենտների բացահայտման համար:

ԲԱՆԿԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ԶՅԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՌԵԶԻԴԵՆՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ձեռնարկությունների կամ կորպորացիաների ռեզիդենտությունը: Ձեռնարկությունը համարվում է այն երկրի ռեզիդենտ, որտեղ նրա տնտեսական շահերի կենտրոնն է և որի տնտեսական տարածքում իրականացնում է որոշակի ծավալի տնտեսական գործունեություն՝ ապրանքների արտադրություն և ծառայությունների մատուցում և/կամ հանդիսանում է հողի, շենքերի, շինությունների սեփականատեր: Արտասահմանյան ձեռնարկությունը համարվում է ռեզիդենտ, եթե տվյալ տնտեսությունում իրականացնում է կամ մտադիր է իրականացնել տնտեսական գործունեություն մեկ տարուց ավելի ժամանակահատվածում:

Բացի վերոնշյալից, որոշ սահմանային դեպքերում (երբ ձեռնարկությունը կամ նրա մասնաճյուղը գործունեություն է ծավալում այլ երկրներում) հաշվի են առնվում նաև այնպիսի պայմաններ, ինչպիսիք են՝ սուբյեկտի գրանցման վայրը, հարկերի վճարման վայրը, ինքնուրույն ֆինանսական միջոցներ ներգրավելու հնարավորությունը, սուբյեկտի կողմից իրականացվող գործառնությունների առանձին հաշվառման հնարավորությունը (հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի հաշվետվություն և այլն):

Շահույթ չհետապնդող կազմակերպությունների ռեզիդենտությունը: Շահույթ չհետապնդող կազմակերպությունը համարվում է այն երկրի կամ տնտեսական տարածքի ռեզիդենտ, որի գործող օրենսդրությամբ կամ սահմանված կանոններով ստեղծվել է տվյալ կազմակերպությունը, և որտեղ նրա՝ որպես իրավական կամ սոցիալական միավորի գոյությունը պաշտոնապես ճանաչված և գրանցված է: Շահույթ չհետապնդող կազմակերպությունների մասնաճյուղերի դեպքում հաշվի է առնվում տվյալ երկրում գործունեության ժամկետը: Եթե արտասահմանյան երկրի կազմակերպությունը տվյալ երկրում մասնաճյուղի միջոցով գործունեություն է ծավալում մեկ տարուց ավելի ժամկետով, ապա տվյալ մասնաճյուղը համարվում է այդ երկրի ռեզիդենտ, իսկ գլխամասային կազմակերպությունից ստացվող ֆինանսավորումը դիտարկվում է որպես արտասահմանից ստացվող տրանսֆերտ:

Պետական կառավարման մարմինների ռեզիդենտությունը: Տվյալ երկրի պետական կառավարման բոլոր մարմինները համարվում են տվյալ երկրի ռեզիդենտներ, նույնիսկ եթե դրանք տեղակայված են այլ երկրների տարածքում:

Այսպես, ռեզիդենտ են համարվում՝

- տվյալ երկրի տարածքում գտնվող կենտրոնական և տեղական կառավարման մարմինների բոլոր ստորաբաժանումները,
- տվյալ երկրի՝ այլ երկրներում տեղակայված դեսպանատները, հյուպատոսարանները, ներկայացուցչությունները և ռազմական բազաները:

Այլ երկրների դեսպանատները, հյուպատոսարանները, ներկայացուցչությունները և ռազմական բազաները, որոնք տեղակայված են տվյալ երկրի տարածքում, համարվում են ոչ ռեզիդենտներ:

Միջազգային կազմակերպությունների ռեզիդենտությունը: Միջազգային կազմակերպությունները որևէ երկրի ռեզիդենտ չեն համարվում, նույնիսկ այն երկրի, որտեղ գործում են: Սակայն միջազգային կազմակերպությունների աշխատակիցները համարվում են այն երկրի ռեզիդենտներ, որի տարածքում տեղակայված է տվյալ կազմակերպությունը:

Այսպիսով, բոլոր այն տնտեսավարող սուբյեկտները, որոնց տնտեսական շահերը տվյալ երկրի տնտեսական տարածքից դուրս են, համարվում են ոչ ռեզիդենտներ, և նրանց հետ իրականացվող բոլոր գործառնությունները դիտարկվում են որպես գործառնություններ ոչ ռեզիդենտների հետ: